

Կապարի վնասակար ազդեցությունը երեխաների վրա



Ոսկրերում կուտակված կապարը հղիության ընթացքում մտնում է արյան մեջ և ազդում զարգացող պտղի վրա: Հղի կանանց մոտ կապարի բարձր մակարդակի ազդեցությունը կարող է առաջացնել վիժումներ, մահացած ծնունդներ, վաղաժամ ծնունդներ և ցածր քաշ ունեցող նորածիններ: Կապարի թունավոր ազդեցության նկատմամբ հատկապես խոցելի են փոքր տարիքի երեխաները: Հիմնականում ազդում է նյարդային համակարգի զարգացման վրա:

Կապարը հանգեցնում է երեխաների մոտ խորը և անդառնալի բացասական փոփոխությունների: Կապարի քիչ քանակները, որոնք չեն առաջացնում որևէ ակնհայտ ախտանիշ, կարող են ազդել երեխաների ուղեղի զարգացման վրա և հանգեցնել մտավոր զարգացման/ինտելեկտի գործակցի (IQ) նվազմանը, վարքագծային փոփոխությունների, ինչպիսիք են ուշադրության շեղումը,



ուշադրության կենտրոնացման ժամանակահատվածի կրճատումը և հակասոցիալական վարքագծի դրսևորումը և ուսման վատ արդյունքները: Թերսևված երեխաներն ավելի են հակված կապարի ազդեցությանը, քանի որ նրանց օրգանիզմը ավելի շատ կապար է յուրացնում, երբ այլ սննդանյութեր, ինչպիսիք են կալցիումը կամ երկաթը, պակասում են:

Արյան մեջ կապարի «անվտանգ» մակարդակ չկա. արյան մեջ կապարի նույնիսկ մինչև 3,5 մկգ/դլ կարող է երեխաների մոտ առաջացնել ինտելեկտուալ անկում, վարքագծային խնդիրներ և սովորելու դժվարություններ: Արյան մեջ կապարի մակարդակի մեծացմանը զուգընթաց մեծանում է ախտանիշների արտահայտվածությունը և հետևանքների սպեկտրը, հիվանդության ծանրությունը:



Սույն տեղեկատվական նյութը ստեղծվել է «Հայ կանայք հանուն առողջության փոքր շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից՝ «Աղտոտիչների վերացման հարցերով միջազգային ցանց»-ի (IPEN) ֆինանսավորմամբ իրականացվող «Կապարը ներկերում» ծրագրի շրջանակում:

